զեկուցում, որոնցմէ մեզի համար ամէնէն հետաքրքրականն է «Ակնարկ հայ գրականութեան վրայ եւ նրա ուսումնասիրութեան կարեւորութիւնը արեւելագիտութեան համար»։ Ոչ նուազ հետաքրքրական է մեզի նաեւ արտաքոյ կարգի հայասէր Գերմանացւոյն՝ Դր. Ա. Հերմանի զեկուցումը — Հունգարիոյ մէջ Հայկական թանգարան մը հիմնելու մասին (տես ՀԱ, ԺԹ. 3)։ — Պ. Հ. Առաքելեան կը պատմէ սիրուն միջադէպ մըն ալ, ուսկից կ'իմանանք թէ հայագէտներ ևս մասնակցած են համաժողովին։ «Ապրիլ 18ին, կը պատմէ Պ. Ա., երեկոյեան ժամը 9ին Excelsior շքեղ հիւրանոցի սրահներում ընտանեկան գումարումն ունեցան կոնգրէսիստները միմեանց հետ ծանօթանալու նպատակով։ Այդ տեղ լեզուների եւ բարբառների կատարեալ բաբելոնական խառնուրդ էր. ականջիս շարունակ հասնում էր արաբ, պարսիկ, թուրք հնչիւնը, մերթ չինացու ձայնը, երբեմն ռուսերէն, յաճախ, ի հարկէ ֆրանսերէն, գերմաներէն եւ անգլիերէն։ Հայ միայն ես էի. նստած, մտախոհ, դիտում էի եւ որոնում էի ծանօթ դէմքեր. յանկարծ լսում եմ այս խօսքերը. «Ողջոյն ձեզ, որդիք Հայկայ, զի՞ կաս մտախոհ»։ Նայում եմ, առաջիս կանգնած է մի պատկառելի ալեւոր, ծիծաղուն աչքերով, համակրելի դէմքով, կուրծքը շքանշաններով զարդարուած։ Այդ միջոցին մօտենում է ինձ Պարսկաստանի պատուիրակ Միրզա Աբդուլ Հուսէյն խանը եւ ծանօթացնում է ինձ. դուրս է գալիս, որ պատկառելի ծերունին Հէյդելբերգի համալսարանի պրոֆէսոր Մէրքսն է, արեւելագէտ։ Նա բացատրեց ինձ, որ զբաղվում է հայկական ուսումնասիրութիւններով, կարող է խօսել միայն գրաբար. վերջին 10 տարին նա բացառապէս զբաղված է Աստուածաշնչի հայ բնագրի ուսումնասիրութեամբ։ Ես ուրախութիւնս յայտնեցի, որ նրա շնորհիւ, լեզուների այս բաբելոնի մէջ հայոց լեզուն ևս հնչվեց։ Շուտով մօտեցան մեր խմբին պարսկագէտները եւ մենք սկսեցինք պարսկերէն խօսել։ Ապա յայտնվեց եւ մի նոր հայագէտ — համալսարանի պատմութեան Պրոֆ. Պօլ Կարօլիդէս, որ յայտնեց ինձ, թէ եկել է կոնգրէսին մասնակցելու՝ յատկապէս կարդալու համար իր մի ռէֆերատը «Յարալէզների, Արա գեղեցկի եւ Ս. Սարգսի մասին»։ — Ս. Սարգիս, ասացի ես զարմացած, բայց ի՞նչ կապ կայ յարալէզների եւ նրա մէջ։ — Շատ մեծ կապ, ես այդ ցոյց կը տամ իմ ռէֆերատիս մէջ»։

5. ԺԹ. դարու հայ գրականութիւնը։ — Գրեթէ երկու տարի յառաջ առիթ ունեցանք (տես ՀԱ. ԺԷ. էջ 350) Դր. Բ. Խալաթեանցի Die neuere armenische Literatur գեղեցիկ գրուածքին վրայ խօսելու։ Նոյն՝ բայց անկէ շատ աւելի ընդարձակ աշխատութիւն մըն ալ նորերս հրապարակ հանեց Դր. Խալաթեանց. նախ՝ Neue heidelb. Jahresbücher XIV հրատարակութեան մէջ եւ ապա առանձին արտատպելով։ Այս երկն երիտասարդ բանասիրին 15րդ աշխատութիւնն է. ընդ մանրիկներն ալ հաշուելով՝ 20րդին կը մօտենայ։ Die armenische Literatur des 19. Jahrhunderts թէպէտ քիչ մը համառօտ է, բայց շնորհիւ այս համառօտութեան՝ նպատակայարմար, առանց ձանձրոյթ պատճառելու, ամփոփ գաղափար մը կու տայ Գերմանացւոց՝ ԺԹ. դարու հայ գրականութեան եւ մասամբ հայ գիտութեան գլխաւոր հոսանքներուն մասին։ Սիրուն ու ամհուն ոճով մըն ալ գրուած ըլլալով՝ շատ սիրով կը կարդացուի։ — Վերջին հատուածին մէջ կարուկ, անաչառ եւ շատ յաջող կերպով ներկայացուած են Մխիթարեանց կրկին դպրոցները — իրենց ուղղութեանց իրական ու ճշգրիտ գոյներովը։

6. Եզեան †։ — Նախընթաց ամսոյն 13ին ընդունեցանք մենք Պետերբուրգէն հեռագիր մը, որ Կ. Յ. Եզեանի մահը կը գուժէր։ Սոյդ է թէ Եզեան իւր ուժերը բոլորովին ռուս պետութեան եւ հայ ազգին ծառայութեան նուիրած եւ սպառած — իւր կենաց երեկոյացեալ ժամուն կը մեկնի աշխարհէս, այսու հանդերձ զգալի կորուստ մըն է Եզեանի մահը՝ որ հասարակութիւնը կ'ունենայ. վասն զի հասարակութիւնը կը կորսնցնէ յանձին Եզեանի իւր փորձառու խորհրդատուներէն եւ բարերարներէն մին։ Եզեան դեռ անցեալ տարի տօնեց իւր պետական եւ հասարակական-գրական գործունէութեան յիսնամեակը։ Ծնած էր 1835ին Սեպտ. 8։ Լազարեան Ճեմարանի դասընթացքը լմնցնելէն, Պետերբուրգի համալսարանին արեւելեան բաժինն աւարտելէն վերջը՝ ներքին գործոց նախարարութեան մէջ այլեւայլ պաշտօններ ստանձնած ու յաջողութեամբ վարած էր։ Հանգուցեալը Սանասարեանց վարժարանին բարոյական հիմնադիրն էր, ինչպէս եւ Իզմիրեանց մրցանակին։ Ունի նա այլեւայլ գրութիւններ — հայ կամ ռուս լեզուով գրած։ Եզեանի idée fixeն էր «Սրբոյ Հայաստանեայց (Էջմիածնական) եկեղեցւոյ սէր հայութեան»։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ – Խօսք մըն ալ Հունգարիայի եւ Դրանսիլուանիայի ազգային թուին վրայ ու հայկական տիպը. 193։
ՊԱՏՄԱԿԱՆ – Արշակունի դրամներ – Նախարշակունիք եւ հնագոյն արշակունիք եւ իրենց ծանօթ դրամները. 198։
ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ – Ցուցակ ձեռագրաց Թաւրիզի. – Ա. Ցուցակ ձեռագրաց մատենադարանին Ղալայի կամ Բերդաթաղի. 201։ — «Խոսրովիկ թարգմանիչ» եւ իւր երկասիրութիւնները. 213։
ԲՆԱՊԱՏՄԱԿԱՆ — Կաղամախին ու Բարտին. 221։

ԱՅԼԵՒԱՅԼՔ

ԺՈՂՈՎԱԾՈՅ. 1. «Հայ-կաթոլիկների աղերսագիրը։» – 2. Դաւրժեան Քամանեանի մրցանակին մասին։ – 3. Լրագրական։ — 4. Արեւելագիտաց ԺԴ. համաժողովը։ – 5. ԺԹ. դարու հայ գրականութիւնը։ – 6. Եզեան †. 222։

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳԻՐ
Հ. ՌԱՓԱՅԵԼ Վ. ՊԱՐԹՆՁ
ՎԻԵՆՆԱ. ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

digitised by A.R.A.R.@